չինեին։ Հետազոտողի այն միտքը, թե աղվանից Ստեփանոս կաթողիկոսը կարող էր ապաստանել միայն վրացական Հերեթում, քանի որ «այդ ժամանակ Անդրկովկասում միակ երկիրը, ուր անդորրություն էր տիրում և քրիստոնյաներին մահմեդականների կողմից վտանգ չէր սպառնում Վրաստանն էր»[39], *Հերգ-Հերեթ առնչությունը հավաստող վճռորոշ փաստարկ ծառայել չի կարող։ Օտար բռնակալների տիրապետությունը, չնայած իր ողջ անբարենպաստությանը, համենայն դեպս երբեք չի բացառել հայ, աղվանից կամ վրաց հոգևոր պետերի ապաստանելը մայր երկրում։*

Ինչպես տեսանք, հայկական աղբյուրները թույլ են տալիս Հերդ գավառը տեղորոշել պատմական Հայաստանի Ուտիք նահանգում, ուստի այդ երկրամասի նույնացումը Հերեթի հետ ինքնըստինքյան անհնարին է դառնում, սակայն դեռևս մասնագիտական քննության է սպասում Հերդ (Հերք)-Հերեթ անվանումների ծագումնաբանական առնչակցության հարցը՝ պարզելու համար վրացական աղբյուրներից հայտնի «Հեր» ցեղանվան կապը վերոհիշյալ տեղանունների հետ։

А. Г. МАРГАРЯН — К локализации области Херг и крепости Херк (Херкан). — Историк XIII века Степанос Орбелян, повествуя об освобождении армянских земель в конце XII — начале XIII вв., среди прочих хорошо известных географических пунктов называет Херк (большинство изданий древнеармянского текста воспроизводит ошибочное чтение поздних рукописей—Херт), местонахождение которого осталось непроясненным им. Исследование показывает, что автор имел в виду крепость, упоминаемую в «Албанской хронике» (XII в.) Мхитара Гоша в форме «Херкан», а в «Жизнеописании Джалал ад-Дина Манкбурны» ан-Насави (XIII в.) — «Херк», и близлежащую территорию. Данные армянских источников и микротопонимики позволяют предположить, что область Херг находилась в средней части бассейна реки Тертер (Трту) и простиралась по нижнему течению этой же реки, на востоке включая и город Партав.

---

[39] *Մ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 108։ Ի դեպ, իր կարծիքը փաստարկելիս Թ. Պապուաշվիլին դիմել է նույն խոցելի պատճառաբանությանը, որը բերել է Մ. Բրոսսեն՝ Կիրակոս Գանձակեցու Պատմության Հերգը Պարսկահայքի Հեր գավառի հետ նույնացնելիս, տե՛ս* M. Brosset, *նշվ. աշխ., էջ 89, ծ. 4։*